

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

106

Խմբագրական

ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒԱԾ
ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարությունը կը ստեղծի
Համահայկական երիտասարդական
խորհրդարան

Սփյուռքի ներկայացուցիչներ

Սիլվա Չարմաքչեան. Աստղային Փայքի
Վարպետը

Վերատպություն

4.000 հայկական յուշարձանի եւ հայերէն
խօսող միակ հնդկահայի մասին

Խմբագրական



ՊԵՏԱԿԱՆ

ՄԱԿԱՐԴԱԿԻ

ԲԱՐՁՐԱՑՈՒԱԾ

ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2011-03-26

2010թ. հոկտեմբերի 16-ին Գորիսում Սփյուռքի հայկական լրատուամիջոցն էրի ներկայացուցիչների առջև նախագահ Սերժ Սարգսեանի ելույթից յետոյ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար, ակադեմիկոս Ռամիզ Մեիթիեւի անունից այդ երկրի էլեկտրոնային լրատուամիջոցներում (Trend.az, Day.az եւ այլն) հոկտեմբերի 29-ին տեղադրուեց եւ ապա առանձին գրքոյկի վերածուեց՝ Գորիս-2010. ամսուրդի թատրոնի տարեշրջանը¹ վերնագիրը կրող մի ծաւալուն՝ տեղեկանք՝ որը փաստօրէն ՀՀ նախագահի առաջադրած պատմագիտական փաստարկների՝ պաշտօնական պատասխանն է՝ Այն սկսում է քաղաքական մեղադրանքներով եւ աւարտում մաւականին ընդարձակ

պատմագիտական շարադրանքով, ինչն անկասկած, Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության շուրջ ադրբեջանական նախորդ կեղծարարությունների խտացումը տարբերակն է:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հ. Յարութիւնեանի յօդուածն ամբողջութեամբ <Հայերն այսօր>-ը ներկայացնում է կից ֆայլով:



ՀՀ սփիւռքի նախարարութիւնը կը ստեղծի Համահայկական երիտասարդական խորհրդարան

2011-03-24

«Ինչպէս իւրաքանչիւր կազմակերպութեան կանոնադրութիւն, այնպէս էլ Համահայկական երիտասարդական խորհրդարանի կանոնադրութիւնը, սահմանում է գործունէութեան կարգը, շրջանակներն ու ձեւերը: Կանոնակարգի վերջնական մշակման համար ներկայում նախագիծն ուղարկում ենք հայկական երիտասարդական կազմակերպութիւններին՝ ակնկալելով նրանց առաջարկութիւնները: Զուգահեռ ստեղծում ենք նաեւ հայկական

երիտասարդական կազմակերպութիւնների տուեալների բազա՝ եղածին յաւելելով բոլոր այն կազմակերպութիւնների տուեալները, որոնք ընդգրկուելու են խորհրդարանի կ'ազմումէ,- տեղեկացրեց ՀՀ սփյուռքի նախարարութեան Համահայկական ծրագրերի վարչութեան պետ Ատոմ Մխիթարեանը: Նա նաեւ մանրամասնեց, որ համաձայն կանոնադրութեան նախագծի, Համահայկական երիտասարդական խորհրդարանում ընդգրկուելու են ոչ թէ անհատ երիտասարդներ, այլ հայկական երիտասարդական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, եւ իւրաքանչիւր կազմակերպութիւն՝ լինի փոքրաթիւ համայնքի, թէ համահայկական, խորհրդարանում հանդէս է գալու մէկ ձայնի իրաւունքով: Անդամակցութեան համար ոչ մի սահմանափակում չի լինելու:

Համահայկական երիտասարդական խորհրդարանի ձեւաւորմանն ու գործունէութեանը մասնակցելու համար բաւական է օրէնքի պահանջին համապատասխան գրանցուած հասարակական կազմակերպութեան անդամ լինել: Իսկ պատուիրակման հարցը իւրաքանչիւր կազմակերպութեան որոշելիքն է: Ի դէպ,

անդամակցող կազմակերպությունների թիւը եւս սահմանափակումների չի ենթարկուի: Քննարկուելիք թեմաների առնչութեամբ արդէն կան առաջարկներ եւ յստակ պահանջ ` խորհրդարանում ներկայացուած կազմակերպությունները պէտք է ստեղծեն քննարկումների, ծանօթութիւնների հետաքրքրական դաշտը: Առաջին քննարկումը Համահայկական երիտասարդական խորհրդարանի կանոնադրութեան մշակման շուրջ է. միւսը Հայաստանում երիտասարդ առաջնորդների երկշաբաթեայ ամառային դպրոցի կազմակերպման հայեցակարգի քննարկումը կը լինի: Կազմակերպիչներն ասուածից զատ ակնկալում են նաեւ իւրաքանչիւր կազմակերպություններից իր խնդիրների կամ համահայկական հարցերի վերաբերեալ հարցադրումներ, քննարկում, որոշումների կայացում:

«այս տարուայ ընթացքում չունենք նախատեսած ֆինանսական միջոցներ, որպէսզի խորհրդարանը ռէալ հաւաքենք, բայց միւս տարուայ համար, եթէ խորհրդարանի գոյութիւնը ապացուցի գործունէութեան անհրաժեշտութիւնն ու

արդիւնաւետութիւնը, ապա կը հրաւիրենք խորհրդարանի իրական նիստ: Իսկ խորհրդարանի աշխատանքներին ակտիւօրէն մասնակցած ներկայացուցիչներին կը հրաւիրենք մասնակցելու նաեւ ՀՀ սփյուռքի նախարարութեան միւս համահայկական երիտասարդական ծրագրերին ու հաւաքներին : Իսկ մինչ այդ, խորհրդարանը կը գործի վերտուալ տիրոջութում եւ քննարկումները կը կազմակերպուեն համացանցի միջոցով,- տեղեկացրեց Ատոմ Մխիթարեանը եւ ընդգծեց, որ քննարկում անցած նախագծերը ներկայացուելու են նաեւ ՀՀ պետական մարմիններին:

Սփյուռքի ներկայացուցիչներ



Սիլվա Չարմարչեան.
Աստղային Փայքի

Վարպետը

2011-03-21

Շեր, Դայանա Ռոս, Դոլի Փարթոն, Ջենիֆեր
Լոպես, Մայքլ եւ Ջանեթ Ջեքսոններ, Ռիհաննա,

Ալիսան հրաշքների աշխարհում, «Օշենս Իլեւրն» (Oceans Eleven) հոլիվուդեան հարիւրաւոր յայտնի անուններ՝ դերասաններ, երգիչներ, արուեստագէտներ, ֆիլմեր, Լաս Վեգասեան ու ճամփորդական նաւերի շքեղ շոուներ այս բոլորը միաւորում են Սիլվիաս Կոստիւմս (Silvia's Costumes) հագուստների պատրաստման սրահում: Հոլիվուդի սրտում գործող այս սրահը շուրջ 30 տարի ապահովում է ամերիկեան շոու բիզնեսի փայլքն ու շքեղութիւնը՝ հանդիսանալով ոլորտի հանրայայտ դիզայներների վստահելի ու լաւագոյն գործընկերը, որոնց յաջողութեան առիւծի բաժինը ապահովում են Սիլվիաս Կոստիւմսի հմուտ դերձակները:

«Յաջողութիւնը հնարաւոր է դարձել անձնուէր աշխատանքի շնորհիւ», գործի կայացումն այսպէս է մեկնաբանում Սիլվիաս Կոստիւմսի հիմնադիր ու տնօրէն Սիլվա Չաքմաքչեանը:

Տիկին Սիլվայի հետ հանդիպումս նրա «բազմագոյն ու բազմաձեւ արուեստանոցում» էր, որտեղից էլ սկսում է ամերիկեան աստղային փայլքը: Սրահում շրջելիս համակում ես գեղեցիկի աննկարագրելի զգացումով:

բազմաթիւ ոճերի հագուստներ՝ դասականից
ժամանակակից, սպորտային, ու երեկոյեան, եւ
նրանցից իւրաքանչիւրն իր պատմութիւնն ունի:
Այցելութեանս պահին, տիկին Սիլվայի
դեկավարութեամբ սրահի դերձակները,
ամերիկացի դիզայների հետ միասին, աշխատում
էին հերթական աստղային պատուերի, այս
անգամ՝ հոլիվուդեան յայտնի դերասան Ուիլ
Սմիթի դասեր շոու ծրագրի համար:

«Սիլվիաս Կոստիւմսի արտադրանքը
լաւագոյններից է, եւ եթէ յաւելեմ Սիլվայի շնորհիւ
այս սրահում ստեղծուած ջերմ մթնոլորտը՝ կարող
եմ համարձակօրէն փաստել, որ սա ոլորտի
դիզայներների ամենասիրելի վայրերից է»,
խոստովանում է հոլիվուդեան դիզայներ Հիլարի
Օլսը:

Սիլվա Չաքմաքչեանն իր ուղին ընտրել է
պատահաբար՝ ընկերոջն օգնելու արդիւնքում.

ԱՄԵՐԻԿԱ

Սիլվա Չաքմաքչեանը ծնուել է Լիբանանում,
մանկութիւնն անցկացրել Հայաստանում մինչ 1967

թուականը, երբ ընտանիքով տեղափոխուում են Միացեալ Նահանգներ: Միլվան արագօրէն յարմարուում է նոր իրականութեանը, որտեղ, ըստ նրա աշխատասէր մարդու համար ստեղծուած էին յաջողութեան հասնելու բոլոր պայմանները: Իր առաջին աշխատավայրում՝ Bank of America, Միլվային խոստումնալից ապագայ էր սպասուում, սակայն մարդկանց անձնուիրաբար օգնելու նրա պատրաստակամութիւնը փոխուում է նրա կեանքի ուղին:

«Հայ ընկերներիցս մէկը վերջապէս աշխատանքի առաջարկ էր ստացել, սակայն անգլերէնի հետ խնդիր ուներ: Որոշեցի օգնել նրան յաղթահարելու այդ խնդիրը եւ թողնելով բանկիս աշխատանքը միացայ նրան», դէպի նոր աշխարհ իր պատմութիւնը յիշուում է տիկին Միլվան:

Նա տարուում է հագուստի ստեղծման սրահում ստեղծագործական բնոյթի նոր աշխատանքով, ինչն էլ որոշուում է Միլվա Չաքմաքչեանի ապագան: Շուտով, նա աշխատանքի առաջարկ է ստանում թատերական խոշոր կազմակերպութիւններից մէկում՝ Center Theatre Group-ում, որպէս հագուստի սրահի ղեկավար: Աշխատանքային ձեռքբերումներից ոգեւորուած Միլվա

Չաքմաքչեանը որոշում է ստեղծել սեփական գործը:

1979 թուականին Սիլվիա Կոստիման իր յաղթարշան է սկսում շոու բիզնեսում մեծ մրցակցութիւն ունեցող այս ոլորտում:

«Հանրայայտ դիզայներների հետ համագործակցութիւնների արդիւնքում սկսեցինք հագուստներ պատրաստել հոլիվուդեան աստղերի համար, որոնց թիւն այժմ անհաշուելի է», նշում է Սիլվա Չաքմաքչեանը:

Ժամանակի ընթացքում Սիլվիա Կոստիմանի յաճախորդների ցանկն ընդլայնւում է՝ ներգրաւուելով թատրոնի, կինոյի, հեռուստատեսութեան ոլորտները, Լաս Վեգասի շքեղ ու հանրայայտ շոուները (Jubilee, O), նաւային ճամփորդութիւնների ներկայացումները (Princess Cruises, Holland American Cruises, Royal Caribbean Cruises), յայտնի մոդելային տներ (Polo Ralph Lauren) (Nike), հեղինակաւոր մրցանակաբաշխութիւններ (MTV Awards).

«Յաճախորդների հետ ազնուութիւն,

Ճշդապահութիւն, անձնուէր աշխատանք, այս յատկանիշներն են ոլորտում յաջողութեան հասնելու նախապայմանները», նշում է Սիլվա Չաքմաքչեանը: Նրա այս յատկանիշները բարձր են գնահատում գործընկերները, որոնցից շատերը համագործակցութեան արդիւնքում այնուհետեւ բարեկամանում են տիկին Սիլվայի հետ:

«Սիլվան ոչ միայն իմ սիրելի ընկերն է, նաեւ՝ ինձ հանդիպած մարդկանցից ամենաբացառիկը: Յաղթահարելով հսկայական դժ-ուարութիւններ, նա կարողացել է իրականացնել լեգենդար գործունէութիւն դիզայնի ու կարի աշխարհում՝ իր բնական ունակութիւններով ու ձեռներէցի տաղանդով յաջողելով իր բոլոր նախաձեռնութիւններում», Սիլվա Չաքմաքչեանի մասին գրում է ամերիկեան կինոյի դերասանուհիներից Իւետ Միմիոն:

Սիլվիա Կոստիւմսի կայացումը մեծապէս պայմանաւորուած է սրահի հմուտ դերձակների աշխատանքով, նշում է տիկին Սիլվան՝ իւրաքանչիւր աշխատակցին համարելով իրեն հարազատ:

«Սրահում հաւաքուել են տարբեր երկրների հայեր՝ ստեղծելով իւրատեսակ կոլորիտ, մի մեծ հայկական ընտանիք, որի կարգախօսը սերն ու համերաշխութիւնն է», փաստում է սրահի տիրուհին՝ ընդգծելով աշխատակիցների հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնը եւ նշելով իր գործընկեր ու բարեկամ Յասմիկ Եալենեանի մասին, ով իր հետ է եղել գործունէութեան ողջ ընթացքում:

ԻՆՔՆՈՒԹԻԻՆ

Սիլվա Չաքմաքչեանի ծանրաբեռնուած աշխատանքը մեծ մրցակցութիւն ունեցող ոլորտում երբեւէ չի խանգարել նրան մեծապէս ներգրաւուած լինելու հայ համայնքի կեանքում: Սիլվա Չաքմաքչեանը մշտապէս բարոյական եւ նիւթական աջակցութիւն է ցուցաբերում բոլոր հայկական կազմակերպութիւններին, հայ եկեղեցիներին, իրեն դիմած իւրաքանչիւր անհատի: Հայ քրիստոնէային վայել, տիկին Սիլվան երբեք չի բարձրաձայնել իր անհամար բարեգործութիւնների մասին եւ միայն ընկերներն են երբեմն յիշատակում դրանք. Փետրուարի 26ին

ներկայ էի ՀՕՄԻ «Միփան» մասնաճիւղի կազմակերպած նորաձեւութեան ցուցադրութեանը, որի գլխաւոր հովանաւորներից մէկը Միլվա Չաքմաքչեանն էր:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍԵԼԻՍ ՀԱՍԱԿՍ ԾԱՂԿՈՒՄ Է

Միլվա Չաքմաքչեանն անմասն չէ նաեւ հայրենիքի զարգացման գործում: Հայաստանի անկախացումից յետոյ, 90ականների սկզբին նա շտապում է հայրենիք՝ այնտեղ ստեղծելով կարուձեւի սրահ, հագուստի խանութ՝ ստեղծելով հարիւրաւոր աշխատատեղեր: Տնտեսական դաշտի անկայունութեան պատճառով սակայն, հայաստանեան գործունէութիւնը չի շարունակում, բայց տիկին Միլվան գտնում է հայրենակիցներին օգտակար լինելու այլ ձեւ: 2009 թուականին նա հիմնադրում է Գառնի բարեգործական կազմակերպութիւնը, որ ստեղծման կարճ ժամանակահատուածում հասցրել է մեծ քանակութեամբ հագուստ առաքել հայ կարիքաւոր ընտանիքներին, անհատներին՝ Հայ աւետարանչական եկեղեցու (AMAA), Առաքելութիւն Հայաստանին (Mission Armenia) կազմակերպութիւնների միջոցով:

ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՒ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՈՒԺԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՄ
ԸՆՏԱՆԻՔԻՑՍ

Աշխատանքում արձանագրելով աննախադեպ
յաջողութիւններ, Սիլվա Չաքմաքչեանը երբեք
գործը չի գերադասել ընտանիքից:

«Շնորհակալ եմ ծնողներիս, որ փոխանցել են
կեանքի բանաձեւը, սովորեցրել աշխատելու
արուեստը, ինչի արդիւնքում կերտել եմ իմ
պատմութիւնը, ստեղծել իմ ընտանիքը», նշում է
տիկին Սիլվան: Նա իր երկու զաւակներին հայեցի
է մեծացրել՝ նաեւ փոխանցելով համամարդկային
արժէքները:

«Որդիս ու դուստրս, նաեւ չորս թոռնիկներս
հպարտ են իրենց հայկական ինքնութեամբ,
միաժամանակ Ամերիկայի արժանի
քաղաքացիներ են», ուրախութեամբ փաստում է
գեղեցիկ ընտանիքի մայրն ու տատիկը:

«Հոյակապ պաշտօն է մարդ լինելն աշխարհում:
Դու հիանալի ես «պաշտօնավարում: Թանկագին
Սիլվա, Քեզ սիրում են շրջապատում, հեռաւոր Լոս

Անջելեսում եւ Հայաստանում: Դու քո վարքագծով, կեցուածքով, անգուգական կազմակերպչական շնորհքով, մարդկային պարզ ու անմիջական բնավորութեամբ, անցած ուղիով, սկզբունքային վարքով ու բարքով արժանի ես ընդօրինակման, յատկապէս երիտասարդութեան համար», նշուած է ՀՀ Սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի՝ Սիլվա Չաքմաքչեանին ուղղուած նամակում:

«Եթէ կա՛յ ցանկութիւն, ստեղծում է նաեւ ճանապարհ, փակուղիներ չկան, միշտ հնարաւոր է ելք գտնել», այսպիսին է կայացած հայ կնոջ պատգամը, որ իր օրինակով է հաստատում խօսքը.

Յ.Գ. Բիզնեսում յաջողութիւնների եւ համայնքում ու հայրենիքում իր ներդրումների համար, Հայաստանի կեանքի առեւտրի պալատը Սիլվա Չաքմաքչեանին արժանացրել է «բիզնեսում Լաւագոյն կին» կոչմանը: Մրցանակը կը տրուի Մարտի 26ին նախատեսուած հանդիսաւոր երեկոյի ժամանակ:

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ

Վերատպութիւն



**4.000 հայկական
յուշարձանի եւ հայերէն
խօսող միակ հնդկահայի**

մասին

2011-03-25

Խումբը չափազրել է թուով 10 բոլոր կանգուն եկեղեցիները, տեսել ու հաշուառել է մօտ 4.000 միաւոր յուշարձան: «այդ 4.000 յուշարձանը անմահացրինք 5.200 լուսանկարով: 90 %-ով, գուցէ եւ աւելի մեզ յաջողուեց Հնդկաստանի հայկական յուշարձանները տեսնել,- այսօրուայ մամուլի ասուլիսում ասաց Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ Սամուէլ Կարապետեանը:

Հնդկաստան ուղեւորութիւնը 7 հազար եւրոյ է արժեցել: Մշակոյթի նախարարութիւնը եւ անցեալ, եւ այս եւ առաջիկայ 2 տարում տարեկան 60 մլն եւրոյ է յատկացնելու հիմնադրամին՝ արտերկրի հայկական յուշարձանները հաշուառելու եւ վկայագրելու համար: Հիմնադրամն ինքն է նախընտրել սկսել Հնդկաստանից:

Նախատեսում է, որ մեկ տարուայ ընթացքում հիմնադրամը նախ կը պատրաստի ֆիլմ, ապա կը հրատարակի ծաւալուն հատոր՝ Հնդկաստանի հայկական յուշարձանների վերաբերեալ:

Աշխատելու օրերին արշավախմբին օգնել են Հնդկաստանում Հայաստանի դեսպան Արա Յակոբեանը, նրա օգնականները եւ հնդկահայերի հովիւ, Կ'ալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հայր Խորէնը: Աւելի քան 20-ական մլն բնակչութիւն ունեցող քաղաքներում դժուար է հայկական յուշարձան գտնել:

«հայկականէ բառը ոչինչ չի ասում հնդիկներին: Երբեմն հնդիկ տաքսիստները Armenia բառը շփոթում էին «armyէ (բանակ) բառի հետ եւ Սամուէլ Կարապետեանի խմբին առաջնորդում Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերում զոհուած բրիտանացի զինուորների գերեզմաններ:

Խումբն այցելել է Հնդկաստանի բոլոր այն վայրերը, որտեղ եղել են հայկական գաղութներ: Երթուղին հետեւեալն է եղել. մայրաքաղաք Դելի, նախկին մայրաքաղաք Ագրայ, աւելի հարաւ՝ Գուալթօր, այնուհետեւ՝ Վարանասի (նախկին Բենարես) եւ

Կ'ալկաթայ: Կ'ալկաթայ քաղաքն ունի 3 հայկական եկեղեցի՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Աստուածածին եւ մայր եկեղեցին՝ Սբ. Նազարէթը: Հայաշատ Կալկաթայում գործում է Հայոց մարդասիրական ճեմարանը, որն ունի հայկական թեքում: Ճեմարանում 90 հայ աշակերտ է սովորում, որոնք եկել են Իրանից, Իրաքից, Հայաստանից:

Այնուհետեւ արշավախումբը եղել է Կալկաթայից հիւսիս գտնուող Չինսուրահ քաղաքում, Բանգլադեշի սահմանին գտնուող Մուշիդաբադ քաղաքին հարեւան Սեյդաբադ գիւղում, այցելել է Հնդկաստանի հարաւում գտնուող Հէյդարաբադ, Մադրաս, Կոչի, Մումբայ (Բոմբէյ) եւ վերջում՝ Սուրաթ քաղաք:

Արշավախմբի տեսած ամենահին յուշարձանը 1611 թուականով թուագրուող խաչքար է եղել Ագրայի հայկական գերեզմանոցում: 1600-ականների գերեզմանաքարեր կային նաեւ Սուրաթի գերեզմանոցում, Մադրասում եւ Կ'ալկաթայի Սբ. Նազարէթ եկեղեցու բակում: Հնդկաստանի խաչքարերն ունեն պարզ յօրինուածք եւ շատ տարբեր են դարի կտրուածքով

մեր պատկերացրած ու ճանաչած խաչքարերից:

Մամուլի Կարապետեանի խօսքերով՝ հնդկահայ համայնքի յուշարձանների տեսականին շատ աղքատիկ է: Եղածները հիմնականում գերեզմանոցներ են՝ տապանաքարերով, նաև հազուադիւտ խաչքարերով, եւ եկեղեցիներ: Հայերը Հնդկաստանում ունեցել են նաև բնակելի տներ, դպրոցներ: Բայց քանի որ 200 տարի է, այդ շէնքերում հայեր չեն ապրում, դժուար է գտնել որեւէ մէկի, ով կ'ասի. «այս շէնքը հայկական է: Գրեթէ բոլոր եկեղեցիների շինարարական արձանագրութիւնները պահպանուել են: Ամենահին արձանագրութիւնները թուագրւում էին 17-րդ դարով: Հիմնականում 18-19-րդ դարի 1-ին կէսի արձանագրութիւններ են:

«հնդկաստանում եւ առհասարակ գաղթավայրերում մենք չենք ստեղծել այնպիսի մի արժէք, որ բնօրրանում ստեղծուած նոյնիսկ միջին կարգի մի յուշարձանի հետ համեմատուի: Գաղթավայրերը ազգային մշակոյթի իմաստով ընկած են: Սրանք շատ աւելի ազդեցութիւններ են կրում: Մեր չափագրած 10 եկեղեցիները եթէ չիմանաք, որ հայկական է, գլխի էլ չէք ընկնի, որ

հայկական է: Արտաքին ձեւերը ձեզ չեն յուշելու, որ սրանք հայ ճարտարապետութեան յուշարձաններ են: Կրում են աւելի եւրոպական, բրիտանական, կաթոլիկ եկեղեցու, նաեւ տեղային ազդեցութիւնէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Նա յաւելեց, որ Գուալտօր քաղաքի հայկական գերեզմանատունը նման է շինական սրբավայրի. հայ տապանատները շինական յատուկ տանիքներ ունեն, թէւ ներսում շիրմաքարերը հայերէն արձանագրութիւններ ունեն (19-րդ դարի առաջին կէս):

Խաչատուր Չաչան միակ հնդկահայն է, ով հայերէն է խօսում

«փորձեցինք գտնել այն, ինչ պահպանուել էր: Յիշատակածս բոլոր քաղաքների շարքի մէջ այսօրուայ դրութեամբ հայեր ապրում են միայն Կալկաթայում` շուրջ 200 շունչէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Նրա խօսքերով` այդ 200 հնդկահայից (ոչ թէ Հնդկաստան տեղափոխուած իրանահայերից, իրաքահայերից կամ հայաստանցիներից) միակ

մարդը, ով կարողանում է հայերէն խօսել, 80-ն անց մի ծերունի էր՝ Խաչատուր Չաչայ անունով: Նրա երկու ծնողն էլ հայ է: Խաչատուր Չաչան ապրում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից հայկական ծերանոցում:

«Իր լուսամուտից նայում էր Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գերեզմանոցին, արդէն տեղը ունէր ապահոված: Եւ ասում էր. «հիմայ այստեղից ես տեսնում եմ իմ տեղը, ուր որ պիտի ամփոփուեմ, եւ տեղը լաւ եմ ընտրել, որովհետեւ այդտեղից էլ երեւում է լուսամուտսէէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Հնդկաստանի հայերը հիմնականում խօսում են կամ անգլերէն, կամ հինդու լեզուներով: Սամուէլ Կարապետեանին զարմացրել է այն, որ Հնդկաստանի տարբեր նահանգների պետական լեզուն եւ գիրը տարբեր են: Տարբեր նահանգներում հնդիկները խօսում ու գրում են անգլերէնով եւ հինդու լեզուի որեւէ ճիւղով:

Սուրաթի գերեզմանոցը բաժանուած է 2 մասի՝ հայկական եւ գերմանական: «գերմանական բաժնում կային դամբարաններ, որ իսկապէս վեհաշուք էին, բայց գոնէ մէկ արձանագրութիւն,

մէկ տապանագիր ամբողջ այդ բաժնում չկար (Եւրոպացի ժողովուրդ են, գիր, գրականութիւն, դպրութիւն, մշակոյթ ունեցող): Մինչդեռ հայկական բաժնում ուղղակի հայերէն արձանագրութիւնները ծփում էինէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Հնդկաստանի հայերի առաջին սերունդն է, սակայն, որ տապանաքարերն արձանագրում էր հայերէն: 18-րդ դարի 2-րդ կէսից եւ մանաւանդ 19-րդ դարից յետոյ հայերէն արձանագրութիւնները պակասում են, սկսում են գերակշռել անգլերէնը, պարսկերէնը (քանի որ Հնդկաստանում հաստատուած առաջին հայերը նորջուղայեցիներ էին): Կան թիֆլիսահայերի տապանաքարեր, որոնց արձանագրութիւնները հայերէն ու վրացերէն են:

Հնդկաստանի ոչ բոլոր քաղաքներում է, որ հայերը գերեզմանոց ունեն: Եկեղեցի չունեցող վայրերի հանգուցեալներին տեղափոխել են եկեղեցի ունեցող վայրեր: Օրինակ՝ քանի որ Վարանասի եւ Կոչի քաղաքները չունեն եկեղեցի, այդ քաղաքների հայ համայնքը գերեզմանոց եւս չի ունեցել:

Մամուէլ Կարապետեանի խումբը Կալկաթայում էր, երբ իմացաւ, որ Դելիում վախճանուած մի հայ կնոջ Կ'ալկաթայ են տեղափոխել, որ այդ քաղաքի հայկական գերագմանատանն ամփոփեն: Դելիում մի քանի հայ է մնացել: Իսկ Հնդկաստանի հայկական եկեղեցիներ յաճախում են քրիստոնէայ, հիմնականում կաթոլիկ հնդիկներ:

Մարդիկ քնում են տապանաքարերի կողքին

Մամուէլ Կարապետեանի խօսքերով՝ Հնդկաստանի հայկական յուշարձանները ընդհանուր առմամբ լաւ վիճակում են եւ վտանգուած չեն: Ինչ ստեղծուել է, կանգուն է: Հնդկաստանում, ինչպէս եւ Իրանում, պետութիւնը պահպանում եւ նորոգում է հայկական յուշարձանները: Ագրայի եւ Սուրաթի գերեզմանոցները, Մադրասի եկեղեցին ու գերեզմանոցը պետութեան կողմից պահպանուող յուշարձանների ցանկում են:

Վտանգուած է միայն Դելիի հայկական գերագմանոցը, որտեղ ընտանիքներ են գիշերում: Այդ խնդրով Հայաստանի դեսպանը դիմել է Հնդկաստանի մշակոյթի նախարարութեանը եւ պատասխան ստացել, որ 1 մլրդ 200 մլն

բնակչութիւն ունեցող Հնդկաստանում օրէնք կայ,
ըստ որի՝ եթէ մէկը մի քանի գիշեր, նոյնիսկ առանց
վրանի, քնել է ինչ-որ տեղ, ապա իրաւունք է ձեռք
բերում այդ հողի նկատմամբ:

«Երեւի այդտեղ մի 20 ընտանիք էին: Այդ մի քանի
մետրի վրայ միայն մահճակալներ են, ուրիշ բան
չկայ: Եւ մահճակալ, տապանաքար,
տապանաքար, մահճակալ: Եւ ապրողի իրաւունք:
Այսինքն՝ մարդը պիտի ապրի: Տեղ չունի, ու՞ր
ապրի: Պետութիւնը այդ իրաւունքը տուել է: Չեն
քանդել, բայց տապանաքարն է, կողքը պառկում
քնում ենէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Հնդիկների ազգային հերոսների մէջ հայեր կան

Պորտուգալացիներից յետոյ հայերը երկրորդ
քրիստոնէայ ազգն են, որ հաստատուեցին
Հնդկաստանում: Ի տարբերութիւն
պորտուգալացիների, որոնք 16-րդ դարում իրենց
ձեռքը վերցրին Հնդկաստանի ողջ ծովային
առեւտուրը՝ հայերը չբաւարարուեցին միայն
ծովափնէայ քաղաքներով եւ մտան երկրի
խորքերը:

Այդ հայերը հիմնականում նորջուղայեցի
առեւտրականներ էին, որոնք յարմար համարեցին

աշխատել Հնդկաստանում: Նրանց առաջին հանգրուանը ծովափնայ Սուրաթ քաղաքն էր: Երկրում գործունեություն ծաւալելու համար հարկաւոր էր թագաւորի թոյլտւոյթոյնը: Այդ պատճառով Սուրաթից յետոյ հայերը հաստատուեցին թագաւորի նստավայր Ագրայում: «ագատ առելորի հետ կապուած իրենց ամէն ցանկացածը թագաւորից ստանալուց յետոյ արդէն տարածուեցին երկրով մէկ: 16-րդ դարից Սուրաթում եւ Ագրայում հայեր եղել են, եւ ամենահին 2 եկեղեցիները, որ արդէն 16-րդ դարում եղել են, հէնց Ագրայի եւ Սուրաթի հայկական եկեղեցիներն են: Սակայն այսօրուայ դրութեամբ Հնդկաստանում եւ մասնաւորապէս այս 2 քաղաքներում թէ այդ 2 եկեղեցիները չկան, եւ թէ գերեզմաններ: Գոնէ մեզ պատահածները այդ վաղեմութիւնը չունէինէ,- ասաց Սամուէլ Կարապետեանը:

Հնդկաստանի հայերը սէր էին վայելում հնդիկների շրջանում, քանի որ ազնիւ ճանապարհով էին հարստացել եւ չէին կեղեքել: Նրանք, հնդիկ ժողովրդի հետ միասին, պայքարել են Հնդկաստանը նուաճած բրիտանացիների դէմ: Այդ շրջանում հայերն իրենց առելորական նաւերը

յարմարեցրել են ռազմական նպատակների եւ պայքարին մասնակցել ռազմական նաւատորմիդով, որոշ յաջողութիւններ ունեցել: Բայց բրիտանացիները, Հնդկաստանի հարստութեանը տիրանալու համար, կենտրոնացրել են այնպիսի ուժեր, որոնց հնդիկները չեն կարողացել դիմադրել եւ գաղութացուել են:

Մամուէլ Կարապետեանն ասաց, որ նոյնիսկ կան հայեր, որոնք գլխաւորել են հնդիկների ազատագրական պայքարը եւ ստացել հնդիկ ժողովրդի ազգային հերոսի կոչում:

Հնդիկը կարծում է, որ հայերը տարօրինակ ժողովուրդ են

Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամը վաղուց էր ցանկանում ուսումնասիրել գաղթավայրերի հայկական յուշարձանները, սակայն դրան հերթ չէր հասնում. հիմնադրամը զբաղուած էր ուղեւորութիւններ կատարելով Արեւմտեան Հայաստան, որը (չիօսած Փոքր Հայքի եւ Կիլիկիայի մասին) 7 անգամ աւելի մեծ է ներկայիս ՀՀ տարածքից:

Մամուլի Կարապետեանի համոզմամբ՝ թէև առաջնային է պատմական Հայաստանի եւ Հի-ի յուշարձանների ուսումնասիրութիւնը, սակայն Հայաստանի պատմութիւնը հնարաւոր չէ ամբողջական ուսումնասիրել՝ առանց պատմական գայթավայրերի պատմութեան:

Այդպիսի կարելոր գաղթավայրեր են Վրաստանը, Հիւսիսային Կովկասը՝ մինչեւ Աստրախան, Ղրիմը մինչեւ Կարպատներ, Նեղոսի հովիտը մինչեւ Եթովպիա կամ Հաբեշտան (Հաբեշտանում հայ վարդապետների քարոզների արդիւնքում հաբեշների մի մասն ընդունել է Հայ առաքելական եկեղեցին եւ այդ գաղափարախօսութեան ներքոյ ստեղծել ուրոյն մի մշակոյթ):

Այնուհետեւ շատ կարելոր են հայկական գաղթավայրերը Միջագետքում, Իրանում, Հնդկաստանում: Յետագայում հայերն աւելի են հեռացել դէպի հարաւարեւելք՝ Հնդկաչին, Ինդոնեզիայի կղզիները, հասել մինչեւ Նոր Զելանդիա եւ Աւստրալիա: Այս վերջին երկու երկրի գաղութները հիմնողների առաջին սերունդները Հնդկաստանից տեղափոխուած հայերն էին:

«որքան հասկացայ, հիացած չէք եկել
 Հնդկաստանից: Մենք սովոր ենք Ձեզ տեսնել
 հիացած՝ տարբեր վայրերից վերադառնալիս: Դուք
 աւելի՞ն էիք սպասում այնտեղիցէ,- Սամուէլ
 Կարապետեանին հարցրեց լրագրողներից մէկը:
 Նա պատասխանեց, որ Նոր Ջուղայի հայերը
 Հնդկաստան գնացին Շահ Աբասի բռնագաղթի
 հետեւանքով: Երբ նրանք հնարաւորութիւն ունէին
 դուրս գալ Նոր Ջուղայից, ոչ թէ տուն
 վերադարձան, այլ գնացին Հնդկաստան: Իսկ հայր
 Խորէնը պատմել է, որ համայնքի անկման
 շրջանում շատ հնդկահայեր վաճառել են
 համայնքի ազգային կալուածքները, թէւ դրա
 իրաւունքը չունէին, եւ մեծ հարստութիւն ձեռք
 բերած՝ գնացել Աւստրալիա:

«այսինքն՝ մենք կոչուած էինք հաւաքելու,
 պատմութեան համար ապահովելու հազարներով
 մարդկանց յիշատակներ, որոնք, ճիշտն ասած,
 ազգի իմաստով, չէին վաստակել անմահանալու
 իրաւունք: Բայց մենք անմահացրինք, որովհետեւ
 մեր գործն է: Եւ դրա համար ուրախութիւն
 առանձնապէս չեմ ապրումէ,- ասաց Սամուէլ
 Կարապետեանը:
 Նա շատ է ուզում, որ Հայկական

Ճարտարապետութիւնն ուսումնասիրող
հիմնադրամը գնա նաեւ Հաբեշատան՝ Նեղոսի
գետաբերան, եւ ուսումնասիրի այնտեղի
հայկական յուշարձանները:

«Եգիպտահայ գաղութը հին է: Մենք
Ալեքսանդրիայում եւ Կահիրէում ունենք
եկեղեցիներ եւ գերեզմանատներ: Միայն մէկ
անուն տամ՝ Համբարձում Երանեան: Երանեան
վարժարանի հիմնադիր վանեցի այդ մարդը
թաղուած է Ալեքսանդրիայի գերեզմանոցում: Եւ
շատ-շատ ուրիշ ազգային նուիրեալներ ունենք: Այ,
աւելի խանդավառ կը գնամ այս մարդկանց
յիշատակները հաւաքելու, լուսանկարելու եւ
հասարակութեան փոխանցելուէ,- ասաց Սամուէլ
Կարապետեանը:

Նրա խումբը Հնդկաստանի Չինսուրահ քաղաքի
եկեղեցուն կից գերեզմանոցում տեսել է Արցախի
Գիւլիստան գաւառի իշխաններ Մելիք-
բեգլարեանների տոհմանական գերեզմանոցը:

Մի հնդիկ ասել է Սամուէլ Կարապետեանին.
«դուք տարօրինակ ժողովուրդ էք: Թագաւոր ունէք՝
Փարիզում է թաղուած, իշխաններ ունէք՝
Չինսուրահում են թաղուած: Ձեր թագաւորն ու

իշխանները, ձեր պետութիւնը թողած, ինչի՞ մասին
են մտածել, ու՞ր են հանգրուանել, ինչի՞ համարէ:
«հնդիկ է նկատում սաէ,- ասաց Սամուէլ
Կարապետեանը:

«Հետք» օն-լայն թերթ